ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՇՄ ՄԱԱՊՁԲ-23/05

ք. Գյումրի «02» փետրվարի 2023 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը ի դեմս ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Աբրահամյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ-ի, ի դեմս տնօրեն Մարգարիտ Արծրունյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **284 180 (երկու հարյուր ութսունչորս հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2023թ. դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և ընդունման-հանձման արձանագրության 2 օրինակ (Հավելված 3)

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[20]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[23]

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

---

[23] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 17/1
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 87321645
ՀՀ 900211205027	ՀՀ 1930045842260100
ՀՀ ֆին. նախ. գործառնական. վարչ.	«Կոնվերսբանկ»ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզպետարանի	Տնօրեն՝
գլխավոր քարտուղար Ա. Աբրահամյան	Մարգարիտ Արծրունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«02» փետրվարի 2023թ. կնքված
ՀՀ ՇՄ-ՄԱԱՊՁԲ-23/05 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1.	30192121/1	Գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր, 1.0 ծայրով, կափարիչով (գրպանին ամրացնելու ամրակով), cello Tri-Mate տեսակի, գրիչի երկարությունը առնվազն 140մմ, միջուկի թանաքի լցված մասը առնվազն 95մմ, գույնը՝ կապույտ:	հատ	40	20000	500	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	500	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
2.	30192125/1	Մարկերներ	Տարբեր գույների /կարմիր, կանաչ, կապույտ, դեղին/ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:	հատ	100	7000	70	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	70	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
3.	30192125/1	Մատիտներ	Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ:	հատ	40	4000	100	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	100	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
4.	30192100/1	Ռետին հասարակ	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	40	4000	100	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	100	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
5.	30192152/1	Կնիք ավտոմատ կլոր	Ավտոմատ կնիքի սարք, 50 սմ տրամագծով /բարձր որակի/:	հատ	4400	22000	5	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
6.	30192111/1	Թանաքի բարձիկներ	Բարձիկ ավտոմատ կլոր կնիքի համար ,R45,կապույտ	հատ	900	9000	10	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	10	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
7.	30192160/1	Շտրիխներ	Նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստեր սպիտակեցնելու (ջնջելու) համար, 7 մլ հերմետիկ փակվող տարայով:	հատ	160	6400	40	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	40	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
8.	30192230/1	Սկոչ երկկողմանի սոսնձված	Կանաչ գույնի, 5 սմ լայնությամբ, երկկողմանի ինքնակպչուն:	հատ	590	5900	10	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	10	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
9.	30192230/2	Սկոչ երկկողմանի սոսնձված	Կանաչ գույնի, 5 սմ լայնությամբ, երկկողմանի ինքնակպչուն:	հատ	550	2750	5	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

10.	30192231/1	Սկոչ	Լայնությունը 50մմ,թափանցիկ,ինքնակպչուն	հատ	250	2500	10	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	10	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
11.	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային	Չոր սոսինձ գրասենյակային(սոսնձամատիտ),թուղթ սոսնձելու համար,չափագրված 24գ:	հատ	150	9000	60	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	60	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
12.	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ N 10, տուփում՝ 1000 հատ:	տուփ	80	4000	50	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	50	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
13.	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր չափսերը 24 /6 մմ, տուփում՝ 1000 հատ:	տուփ	120	6000	50	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	50	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
14.	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ, հաստությունը 80 միկրոն, 1 տուփում 100 հատ:	հատ	2000	80000	40	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	40	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
15.	30197232/1	Թղթապանակ, արագակար, թղթյա	Թղթապանակ ստվարաթղթե, համապատասխան մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	70	28630	409	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	409	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
16.	30197233	Թղթապանակ, թելով, թղթյա	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ (Б) տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3 , հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ: ԳՕՍ 17914-72 կամ համարժեք:	հատ	70	2100	30	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	30	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
17.	30197234/1	Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով /ռեգիստր/, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, հաստությունը՝ 7-8սմ:	հատ	700	35000	50	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	50	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
18.	30197322/1	Կարիչ,20-50 թերթի համար		հատ	950	19000	20	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	20	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
19.	30199230/1	Նամակի ծրար Ա5 ձևաչափի	Ծրար՝ A5 (17.8x25.4) սմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	30	900	30	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	30	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
20.	30199290/1	Նամակի ծրար /Eurostandard/	Ծրար՝/115*225մմ ձևաչափի,90% սպիտակության,1մ2մակերեսը՝100գ զանգվածով N1 օֆսեթային թղթից,ինքնասոսնձվող:	հատ	10	10000	1000	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	1000	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:
21.	30199430/1	Թուղթ նշումների տրցակներով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, 7,6 x 12.7 սմ չափերի, տրցակներով՝ առնվազն 100 հատ:	հատ	150	6000	40	ք. Գյումրի Գ.Նժդեհի 16	40	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ*

ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	Ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 17/1
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 87321645
ՀՀ 900211205027	ՀՀ 1930045842260100
ՀՀ ֆին. նախ. գործառնական. վարչ.	«Կոնվերսբանկ»ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզպետարանի	Տնօրեն
գլխավոր քարտուղար Ա. Աբրահամյան	Մարգարիտ Արծրունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«02» փետրվարի 2023թ. կնքված
ՀՀ ՇՄ-ՄԱԱՊՁԲ-23/05 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	30192121/1	Գրիչ գնդիկավոր	2000	2000	2000	7000	7000	7000	12000	12000	12000	20000	20000	20000	20000
2.	30192125/1	Մարկերներ	700	700	700	2450	2450	2450	4200	4200	4200	7000	7000	7000	7000
3.	30192130/1	Մատիտներ	400	400	400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
4.	30192100/1	Ռետին հասարակ	400	400	400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
5.	30192152/1	Կնիք ավտոմատ կլոր	2200	2200	2200	7700	7700	7700	13200	13200	13200	22000	22000	22000	22000
6.	30192111/1	Թանաքի բարձիկներ	900	900	900	3150	3150	3150	5400	5400	5400	9000	9000	9000	9000
7.	30192160/1	Շտրիխներ	640	640	640	2240	2240	2240	3840	3840	3840	6400	6400	6400	6400
8.	30192230/1	Սկոչ երկկողմանի սոսնձված	590	590	590	2065	2065	2065	3540	3540	3540	5900	5900	5900	5900
9.	30192230/2	Սկոչ երկկողմանի սոսնձված	280	280	280	980	980	980	1680	1680	1680	2800	2800	2800	2800

10.	30192231/1	Սկոչ	250	250	250	875	875	875	1500	1500	1500	2500	2500	2500	2500
11.	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային	900	900	900	3150	3150	3150	5400	5400	5400	9000	9000	9000	9000
12.	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	400	400	400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
13.	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	600	600	600	2100	2100	2100	3600	3600	3600	6000	6000	6000	6000
14.	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	8000	8000	8000	28000	28000	28000	48000	48000	48000	80000	80000	80000	80000
15.	30197232/1	Թղթապանակ, արագակար, թղթյա	2863	2863	2863	10020,5	10020,5	10020,5	17178	17178	17178	28630	28630	28630	28630
16.	30197233	Թղթապանակ, թելով, թղթյա	210	210	210	735	735	735	1260	1260	1260	2100	2100	2100	2100
17.	30197234/1	Թղթապանակ, կոշտ կազմով	3500	3500	3500	12250	12250	12250	21000	21000	21000	35000	35000	35000	35000
18.	30197322/1	Կարիչ,20-50 թերթի համար	1900	1900	1900	6650	6650	6650	11400	11400	11400	19000	19000	19000	19000
19.	30199230/1	Նամակի ծրար Ա5 ձևաչափի	90	90	90	315	315	315	540	540	540	900	900	900	900
20.	301992290/1	Նամակի ծրար /Eurostandard/	1000	1000	1000	3500	3500	3500	6000	6000	6000	10000	10000	10000	10000
21.	30199430/1	Թուղթ նշումների տրցակներով	600	600	600	2100	2100	2100	3600	3600	3600	6000	6000	6000	6000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	ք. Գյումրի,Գարեգին Նժդեհ 17/1
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 87321645
ՀՀ 900211205027	ՀՀ 1930045842260100
ՀՀ ֆին. նախ. գործառնական. վարչ.	«Կոնվերսբանկ»ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզպետարանի	Տնօրեն՝
գլխավոր քարտուղար Ա. Աբրահամյան	Մարգարիտ Արծրունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3
«01 » փետրվարի 2023թ. կնքված
ՀՀ ՇՄ-ՄԱԱՊՁԲ-23/05 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«02 » փետրվարի 2023թ. կնքված
ՀՀ ՇՄ-ՄԱԱՊՁԲ-23/05 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Շիրակի մարզպետարան-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ
(այսուհետ՝ Վաճառող) միջև 2023 թ. -ի կնքված N ՀՀ ՇՄ ՄԱԱՊՁԲ-23/05

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2023թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն